Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2020 թ.
փետրվարի 3-ի N 120 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՄՇԱԿՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ռ. Բաղասյան	- ՀՀ արդարադատության նախարար (խմբի ղեկավար)
Ք. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (խմբի ղեկավարի տեղակալ)
Ա. Այվազյան	- ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական (համաձայնությամբ)
Տ. Եսայան	- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Ա. Մարտիրոսյան	- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Ա. Ղուկասյան	- ՀՀ ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ
Մ. Բաբայան	- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր
Ա. Մարտիրոսյան	- ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ (համաձայնությամբ)
Ն. Սարգսյան	- ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Ա. Չիլինգարյան	- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Վ. Հովսեփյան	- ՀՀ ոստիկանության ՔՀ գլխավոր վարչության պետի տեղակալ, 1-ին վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Հ. Հակոբյան	- ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության պետի պաշտոնակատար (համաձայնությամբ)

Ա. Ավոյան	- ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական փորձաքննությունների բաժնի պետ, ոստիկանության փոխ-գնդապետ
Վ. Սահակյան	- ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
Ս. Մարտիրոսյան	- ՀՀ ոստիկանության զորքերի մարտական պատրաստության բաժնի պետ, գնդապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2020 թ.
փետրվարի 3-ի N 120 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՄՇԱԿՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Ոստիկանության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը լրամշակող միջգերատեսչական աշխատանքային խումբը (այսուհետ՝ խումբ) ոստիկանության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը լրամշակելու նպատակով կազմակերպում է նիստեր, անցկացնում քննարկումներ, հավաքագրում անհրաժեշտ վիճակագրական տվյալներ, ամփոփում ստացված և հավաքագրված տեղեկատվությունը, նիստերի և քննարկումների արդյունքները, ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

2. Խումբը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

3. Խմբի ղեկավարը՝

1) ղեկավարում է խմբի աշխատանքները.

2) կազմակերպում է քննարկումներ.

3) նշանակում է խմբի նիստի անցկացման վայրը, օրը.

4) հաստատում խմբի նիստի օրակարգը.

5) հրավիրում և նախագահում է խմբի նիստերը, ներկայացնում խմբին այլ մարմիններում և կազմակերպություններում.

6) իրականացնում է խմբի աշխատանքների համակարգման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

4. Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության դեպքում վերջինիս փոխարինում է խմբի ղեկավարի տեղակալը՝ օգտվելով նույն լիազորություններից:

5. Խումբն իր աշխատանքներն իրականացնում է աշխատանքային պլանի հիման վրա, որը հաստատում է խմբի նախագահը:

6. Խումբն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

7. Խմբի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

8. Անհրաժեշտության դեպքում խմբի ղեկավարի որոշմամբ կարող են ստեղծվել աշխատանքային ենթախմբեր, խմբի աշխատանքներին մասնակցելու համար կարող են հրավիրվել ազգային կամ միջազգային փորձագետներ, ինչպես նաև ոստիկանության կամ արդարադատության ոլորտում գործունեության առնվազն 3 տարվա փորձառություն ունեցող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ